Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 20-01-2020 թ. որոշմամբ
ՀՀ «ՌԵՍՏԱՐՏ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՌԵՍՏԱՐՏ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՇՏՈՑԻ 45Ա
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1043448
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2018-10-29
1.5 ՀՎՀՀ-ն		02686098
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)94753111
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		aslnarine@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Միքայել Հովհաննիսյան		
Աննա Գևորգյան		
Արեն Մանուկյան		
Արսեն Խառատյան		
Գեմաֆին Գասպարյան		
Սերգեյ Խաչունց		
Հայկ Զաքարյան		
Սոնա Այվազյան		
Դավիթ Պետրոսյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		

8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ռեստարտ նախաձեռնության ինստիտուցիոնալ զարգացման ծրագիր	8960250
	Ուսանողական ճամբար	4745348
	Ռեակտիվիզմ երիտասարդների ակումբ	2732969
	Բուհերի կառավարման համակարգերի ուսումնասիրության ծրագիր	9594760
	Երիտասարդների անհավասարությունը արևելյան Եվրոպայում և Ռուսաստանում	304051
	Հնդկական Ջայ Ջագաթ	4759856
	Ֆիզիկական անձանցից	263497
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Ռեստարտ նախաձեռնության ինստիտուցիոնալ զարգացման ծրագիր	5842605	
Ուսանողական ճամբար	1387124	
Ռեակտիվիզմ երիտասարդների ակումբ	1801320	
Բուհերի կառավարման համակարգերի ուսումնասիրության ծրագիր	9304692	
Երիտասարդների անհավասարությունը արևելյան Եվրոպայում և Ռուսաստանում	53454	
Հնդկական Ջայ Ջագաթ	258954	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	19054503	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	19054503	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ____20____թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«Ռեստարտ» Գիտակրթական Բարեգործական Հիմնադրամ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2019թ. դեկտեմբերի 31-ին

ավարտվող տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ

Հունիս 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Հոգաբարձուների խորհրդի անդամներ	3
Անկախ աուդիտորական եզրակացություն	4
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Միքայել Հովհաննիսյան	խորհրդի նախագահ
Աննա Գևորգյան	անդամ
Սերգեյ Խաչունց	անդամ
Դավիթ Պետրոսյան	անդամ
Արեն Մանուկյան	անդամ
Սոնա Այվազյան	անդամ
Հայկ Զաքարյան	անդամ
Արսեն Խառատյան	անդամ
Գեմաֆին Գասպարյան	անդամ

«ԱՅ ԷՖ ՓԻ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Նիկոլ Դումանի 53-34
E-mail: info@ifp.am
Հեռ. +(374) 99 66 88 55

"IFP" LLC
53-34 Nikol Duman., Yerevan, RA
E-mail: info@ifp.am
Tel. +(374) 99 66 88 55

Անկախ աուդիտորական եզրակացություն № 16

«Ռեստարտ» Գիտակրթական Բարեգործական Հիմնադրամի 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

***Ներկայացվում է** «Ռեստարտ» Գիտակրթական Բարեգործական Հիմնադրամի ղեկավարությանը*

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել *«Ռեստարտ» Գիտակրթական Բարեգործական Հիմնադրամի* (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:
Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք ՀՄԷՍԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Մենք ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից 14-րդ ծանոթագրությանը, որտեղ ներկայացած է COVID-19-ի ազդեցությունը: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի կապակցությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա՞ է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե

այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը.
- ձեռք ենք բերում բավականաչափ և համապատասխան ապացույցներ Հիմնադրամի ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջությամբ պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

30 հունիս 2020թ.
Այ Էֆ Փի ՍՊԸ

Վաղարշակ Մարգարյան
Տնօրեն

Աշոտ Բարսեղյան
Ղեկավար-աուդիտոր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2019	31.12.2018
		հազ.դրամ	հազ.դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	338	-
Ոչ նյութական ակտիվներ		74	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		412	-
Ընթացիկ ակտիվներ			
Կանխավճարներ և դեբիտորական պարտքեր	5	1 020	-
Դրամական միջոցներ	6	10 962	-
Ընդամենը ընթացիկ ակտիվ		11 982	-
Ընդամենը ակտիվներ		12 394	-
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8	412	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություն		412	-
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	7	781	-
Եկամուտներին վերաբերող շնորհ		11 201	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություն		11 982	-
Ընդամենը պարտավորություններ		12 394	-

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են «Ռեստարտ» Գիտակրթական Բարեգործական Հիմնադրամի ղեկավարության կողմից 2020թ.-ի հունիսի 29-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Յուրի Ավագյան

Տնօրեն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 20 էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի

	Ծնթ.	2019 հազ.դրամ	2018 հազ.դրամ
Վարչական ծախսեր	9	(168)	-
Շնորհներից եկամուտ		19 748	-
Կանոնադրական նպատակներին ուղղված ծախսեր	10	(18 068)	-
Գործառնական վնաս		-	-
Ֆինանսական եկամուտ			
Փոխարժեքային տարբերությունից օգուտ(վնաս)		(1512)	-
Շահույթ/վնաս մինչև հարկումը		-	-
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)			
Տարվա զուտ շահույթ/վնաս		-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		-	-

Յուրի Ավագյան

Տնօրեն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 20 էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	2019 հազ.դրամ	2018 հազ.դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր դրամաշնորհներից	31 361	-
Վճարումներ գնումների դիմաց	(6 887)	-
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(10 636)	-
Վճարումներ բյուջե		
Կանոնադրական նպատակների իրականացում		-
Շահութահարկ		
Գործառնական գործունեությունից այլ ելքեր	(508)	-
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	**13 330**	**-**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերման գծով ելքեր	(856)	-
	(856)	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
		-
Դրամական միջոցների զուտ հոսք	***12 474***	-
Արտարժույթի փոխարժեքային տարբերություն	*(1 512)*	-
Տարեսկզբի դրությամբ դրամական միջոցներ	-	-
Տարեվերջի դրությամբ դրամական միջոցներ	***10 962***	-

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 20 էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Ռեստարտ» Գիտակրթական Բարեգործական Հիմնադրամը սկսել է իր գործունեությունը 2018թ.-ի հոկտեմբերի 29-ից և գրանցվել է ՀՀ Արդարադատության նախարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում նույն օրը:

Համաձայն կանոնադրության Հիմնադրամը պետք է իրականացնի բարեգործական ծրագրեր, որոնք ուղղված կլինեն Հայաստանի Հանրապետությունում կրթության որակի բարձրացմանը, երիտասարդության առջև ծառացած խնդիրների լուծմանը: Զարգացնել ուսանողների քաղաքացիական գիտակցությունը, խթանել ուսանողների հետազոտական և գիտահետազոտական ունակությունների աճին, նպաստել ուսանողների ներգրավվածությանը և ակտիվությանը հասարակական աշխատանքներում:

Իր առջև դրված նպատակների արդյունավետ կատարումն ապահովելու համար Հիմանդրամը կարող է համագործակցել՝ համանման այլ կազմակերպութթյունների հետ այդ թվում նաև օտարերկրյա, պետական և հասարակական կազմակերպությունների հետ, ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ:

Հիմնադրամի շահառուներն են երիտասարդները՝ ներառյալ ուսանողները և երիտասարդ գիտնականները:

Հիմնադրամը կարող է իրականացնել օրենքով չարգելված և կանոնադրությամբ սահմանված ցանկացած ձեռնարկատիրական գործունեություն:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ ք. Երևան 0009. Մաշտոցի 45ա:

2019թ.-ին Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 5 մարդ :

2. Պատրաստման հիմքերը

2.1. Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար:Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի»:*

2.2. Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

2.3. Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4. Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում կփոխվեն դրանց համար հիմք հանդիսացող պայմանները:

2.5. Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2017թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1. Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 479.7 ՀՀ դրամ, 1 Եվրոն կազմում էր 537.26 ՀՀ դրամ: Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):
Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2. Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:
Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:
Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:
Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները:
Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասերը պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվներն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 12-ում: Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական ակտիվները ներառում են դրամական միջոցները, որոնք նկարագրված են «փոխառություններ և դեբիտորական պարտքեր» հոդվածում:

I. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Կազմակերպությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:
Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Ներառում են կանխիկ միջոցներ, բանկային հաշիվների մնացորդներ:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են կրեդիտորական պարտքերը, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հիմնադրամը ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 12-ում:

3.3. Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում
Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն

մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:
Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:
Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.4. Շնորհներ

Շնորհները հիմնադրամի կողմից ստացված միջոցներն են, որոնք անհատույց են և նպատակաուղղված են Հիմնադրամի անցյալում կամ ապագայում իրականացվող որոշակի գործողությունների դիմաց:

Շնորհները դասակարգվում են՝

- ✓ Եկամուտներին վերաբերող շնորհներ
- ✓ Ակտիվներին վերաբերող շնորհներ

Ատիվներին վերաբերող շնորհների հիմնական պայմանն այն է, որ Հիմնադրամը պետք է գնի կամ կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի երկարաժամկետ ակտիվներ: Մյուս նպատակներով օգտագործվող շնորհները դասակարգվում են որպես եկամուտներին վերաբերող: Շնորհները ճանաչվում են որպես եկամուտ սիստեմատիկ հիմքով այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցվում են համապատասխան ծախսումները, որոնց համար ստացել են այդ շնորհները:
Շնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ որպես հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է կազմակերպությանը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

3.5. Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:
Կազմակերպության անհատույց ստացված ակտիվները և ծառայությունները և դրանց հաշվին կատարված ծախսերը շահութահարկի տեսակետից հարկվող տարրեր չեն:

3.6. Եկամտի ճանաչում

Հիմնադրամի եկամուտները գոյանում են ստացված նվիրատվություններից և այլ աղբյուրներից:

Նվիրատվություններից եկամուտ

Այս եկամուտը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ առկա է հիմնավորված երաշխիք, որ նվիրատվությունը ստացվելու է կամ երբ նվիրատվությունը փաստացի ստացվել է: Այս եկամուտը ներառվում է «գործունեությունից եկամուտ» հոդվածում:

3.7. Ֆինանսական հաշվետվությունների հաստատումը

2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են տնօրենների խորհրդի կողմից 2020 թվականի հունիսի 29-ին:

3.8. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումներն հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:
Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության:
Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:
Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:
Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

- ✓ Հաշվողական և համակարգչային տեխնիկա – 1 տարի

3.9. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն Հիմնադրամ, և ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:
Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:
Անորոշ օգտակար ծառայությամբ ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, դրանք չափվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:
Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

- ✓ Համակարգչի օպերացիոն համակարգ- 10 տարի

Հիմնադրամի հաշվեկշռում հաշվառվող ոչ նյութական ակտիվը իրենից ներկայացնում է համակարգչի օպերացիոն՝ Microsoft Widnows 10 Pro 64bit Russian 1pk DSP OEI DVD համակարգ: 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ համակարգչային ծրագրի սկզբնական արժեքը կազմել է 79.9 հազար դրամ, մաշվածքը- 5.7 հազար դրամ, հաշվեկշռային արժեքը- 74.2 հազար դրամ:

4. Հիմնական միջոցներ

(հազար դրամ)

	Հաշվողական և համակարգչային տեխնիկա	Ընդամենը
Սկզբնական արժեք		
Առ 01 հունվարի 2018թ.	-	-
Ավելացումներ		-
Նվազեցում		-
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	-	-
Ավելացումներ	776	776
Նվազեցում		-
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	776	776
Կուտակված մաշվածություն		-
Առ 01 հունվարի 2018թ.	-	-
Ավելացումներ		-
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	-	-
Ավելացումներ	438	438
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	438	438
Ընթացիկ արժեք		
Առ 1 հունվարի 2018թ.	-	-
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	-	-
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	338	338

5. Դեբիտորական պարտքեր, կանխավճարներ

	31.12.2019 հազար դրամ	31.12.2018 հազար դրամ
Կանխավճարներ ապրանքների և ծառայությունների գծով	512	-
Դեբիտորական պարտքեր (առհաշիվ)	508	-
Ընդամենը կանխավճարներ և դեբիտորական պարտքեր	1 020	-

6. Դրամական միջոցներ

	31.12.2019 հազար դրամ	31.12.2018 հազար դրամ
Բանկային հաշիվներ - Եվրոյով EUR	4 756	-
Բանկային հաշիվներ -ԱՄՆ USD	5 084	-
Բանկային հաշիվներ - ՀՀ դրամով	1 122	-
Ընդամենը դրամական միջոցներ	10 962	-

7. Կրեդիտորական պարտքեր

	31.12.2019 հազար դրամ	31.12.2018 հազար դրամ
Գնումների գծով	67	-
Հարկերի գծով	714	-
Ընդամենը կրեդիտորական պարտքեր	781	-

8. Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհներ

	2019 հազար դրամ	2018 հազար դրամ
Մնացորդը տարեսկզբին	-	-
Ստացված ակտիվ	856	
Շնորհից եկամտի ճանաչում	(444)	
Մնացորդը տարեվերջին	412	-

Եկամուտներին վերաբերող շնորհներ

	2019 հազար դրամ	2018 հազար դրամ
Մնացորդը տարեսկզբին	-	-
Ստացված դրամաշնորհ	30 505	
Շնորհից եկամտի ճանաչում	(19 304)	
Մնացորդը տարեվերջին	11 201	-

9. Վարչական ծախսեր

	2019 հազար դրամ	2018 հազար դրամ
Բանկային ծախսեր	108	-
Այլ ծախսեր	60	-
Ընդամենը վարչական ծախսեր	168	-

10. Կանոնադրական նպատակներին ուղղված ծախսեր

	2019 հազար դրամ	2018 հազար դրամ
Աշխատավարձ	11 103	
Վարձակալություն	2 226	
Ճամբարի կազմակերպման ծախսեր	2 304	
Հյուրանոցի և սննդի ծախսեր	1 418	
Տրանսպորտային ծախսեր	190	
Վարձակալած տարածքների գրասենյակային և կոմունալ ծախսեր	362	
Հիմնական միջոցների մաշվածություն	444	
Այլ ծախսեր	21	
Ընդամենը կանոնադրական ծախսեր	18 068	-

11. Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են՝ հիմնադրիներ, Հիմնադրամի հոգեբարձուների խորհրդի անդամներ, հիմնական ղեկավար անձնակազմ՝ ինչպես նկարագրված է ստորև.

Հիմնադիրներ

- *Արամայիս Պետրոսյան,*
- *Վիգեն Խալատյան*

Խորհրդի անդամներ

Միքայել Հովհաննիսյան	խորհրդի նախագահ
Աննա Գևորգյան	անդամ
Սերգեյ Խաչունց	անդամ
Դավիթ Պետրոսյան	անդամ
Արեն Մանուկյան	անդամ
Սոնա Այվազյան	անդամ
Հայկ Զաքարյան	անդամ
Արսեն Խառատյան	անդամ
Գեմաֆին Գասպարյան	անդամ

Հիմնադրամի տնօրեն Յուրի Ավագյան

Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները:

Գործարքներ	2019թ. հազար դրամ
Հաշվարկված աշխատավարձ և պարգևատրումներ	
Խորհրդի անդամներին	1 580
Հիմնադրամի տնօրեն	2 674
Հիմնադրամին տրամադրված ծառայություններ խորհրդի այլ կապակցված անդամների կողմից	305

12. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Տրված փոխառություններ
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր
- Ստացված փոխառություններ

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

Ֆինանսական ակտիվներ

	Վարկեր և դեբիտորական պարտքեր 2019թ. հազար դրամ	Վարկեր և դեբիտորական պարտքեր 2018թ. հազար դրամ
Մնացողներ բանկերում	10 962	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**10 962**	**-**

Ֆինանսական պարտավորություններ

	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ 2019թ. հազար դրամ	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ 2018թ. հազար դրամ
Կրեդիտորական պարտքեր	67	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**67**	**-**

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, արժեթղթերում ներդրումներ, առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր, ինչպես նաև վարկեր և փոխառություններ:
Դրամական միջոցների և դրանց համարժեքների, առևտրային և այլ դեբիտորական պարտքերի, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է դուստր ընկերությունների միջոցով իրականացվող վաճառքներից:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև բանկերում պահվող դրամական միջոցներից և դրանց համարժեքներից: Վերջիններիս դեպքում ընդունելի են միայն բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատությունները:
Հաշվետու ամսաթվի դրությամբ գործընկերների պարտականությունների չկատարման հետևանքով առաջացող վնասներ չեն ակնկալվում:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Հիմնադրամի տոկոսաբեր, առևտրային և արտարժութային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժութային փոխարժեքի (արտարժութային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Արտարժութային ռիսկ

Արժութային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արժութային ռիսկին Հիմնադրամի հակվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված դրամական միջոցների հետ:
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ կազմել է 479.70:
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Եվրոյի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ կազմել է 537.26:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Հիմնադրամի գործող կապիտալի կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Հիմնադրամի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:
Ստորև ներկայացված են Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

31 դեկտեմբերի 2019թ. դրությամբ	մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	5 տարուց ավել
	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ
Կրեդիտորական պարտքեր	67	-	-	-	-
Ընդամենը	67	-	-	-	-

13. Պայմանական պարտավորություններ
2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս հաշվետվության հաստատման ամսաթիվը Հիմնադրամի դեմ հարուցված դատական հայցեր չկան:

14. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր
2020 թվականի հունվարի 30-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) հայտարարեց առողջապահական գլոբալ արտակարգ իրավիճակ Չինաստանի Ուհան քաղաքում ծագած կորոնավիրուսի նոր շտամի պատճառով (COVID-19 բռնկում), ինչպես նաև նշեց միջազգային հանրության համար առկա ռիսկի մասին, քանի որ վիրուսը տարածվում է ողջ աշխարհում իր ծագման վայրից դուրս: 2020 թվականի մարտին ԱՀԿ-ն COVID-19-ի բռնկումը որակեց որպես պանդեմիա ՝ հիմնվելով դրա համաշխարհային ազդեցության արագ աճի վրա:

COVID-19-ի բռնկման ամբողջ ազդեցությունը շարունակում է զարգանալ սույն հաշվետվության ամսաթվի դրությամբ: Որպես այդպիսին, անորոշ է, թե ինչ մասշտաբի ազդեցություն կունենա պանդեմիան Հիմնադրամի ֆինանսական վիճակի, իրացվելիության և գործունեության հետագա արդյունքների վրա: Ղեկավարությունն ակտիվորեն հետևում է համաշխարհային իրավիճակի ազդեցությանն իր ֆինանսական վիճակի, իրացվելիության, գործառնությունների, հաճախորդներին մատուցվող ծառայությունների, և աշխատուժի վրա:

2020թ. մարտի 16-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը մեկ ամսով հայտարարել է երկրում արտակարգ իրավիճակ, որը երկարաձգվեց մինչև 2020թ. հուլիսի 13-ը :

Հաշվի առնելով COVID-19 բռնկման ամենօրյա զարգացումները և դրա տարածման սահմանափակմանն ուղղված համաշխարհային գործողությունները՝ Հիմնադրամի ղեկավարությունը դեռևս չի կարողացել գնահատել COVID-19-ի բռնկման ազդեցությունն իր գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի կամ իրացվելիության վրա 2020 ֆինանսական տարվա համար:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 02.10.2020 16:58